

**Կենսաբանություն**

УДК 58.03+581.174+543.428

**Զ. Մ. ԹԱՎՈՅՅԱՆ, Հ. Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

**ՔԼՈՐԵԼԱ ԵՎ ՍՊԻՐՈՒԼԻՆԱ ՄԻԿՐՈՋՐԻՍՊՈԽՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆ-  
ՏՐԱՍՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՎԹԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՊԱՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ**

Ներկայում ֆոտոսինթետիկ ապարատի տիլակոփային քաղանքներում էլեկտրոնների տեղափոխման գործընթացների վրա ծանր մետաղների ազդեցության ուսումնասիրությունը հանդիսանում է ժամանակակից կենսաֆիզիկայի կարևոր խնդիրներից մեկը:

Հայտնի է, որ եթք ջրիմուները ինտոքսիկացվում են ծանր մետաղների աղերով, նրանց ֆոտոսինթեզի ինտենսիվությունը հանդիսանում է շատ արդյունավետ տեստային ռեակցիա [1]: Քրորապիլաստների էլեկտրոն-տրանսպորտային շղթայի տարրեր հատվածներում ծանր մետաղները արգելակում են էլեկտրոնների տեղափոխությունը: Արդյունաբերական և զուղատնտեսական քաղնունների հետևանքով առաջացած ծանր մետաղների շարքին է դասվում կապարը (Pb), որը ֆոտոսինթեզը ընկճող ֆիտոտոքսիկ ազետոններից մեկն է [2]: Կապարը իջեցնում է ֆոտոսինթեզի ինտենսիվությունը և անջատված քրորապիլաստներում արգելակում Հիլի ռեակցիան: Ծանր մետաղների ազդեցության ժամանակ առաջնային թիրախ են հանդիսանում ֆոտոհամակարգ-2-ի (ՖՀ2) օքսիդացող քաղաղրիչները:

Խեն բույսերի և միկրոօրինուների տեսակների, ինչպես նաև մշակման պայմանների քազմազանությունը բարդություն է ստեղծում հետազոտությունների արդյունքների համեմատության և եզրահանգումների համար, սակայն ծանր մետաղների խիստ ֆիտոտոքսիկ ազդեցությունը կասկած չի հարուցում [3]:


Սույն աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել կապարի ազդեցությունը միկրոօրինուների էլեկտրոն-տրանսպորտային շղթայում էլեկտրոնների տեղափոխման ակտիվության վրա, որով պայմանավորված է ֆոտոսինթեզի առաջնային պրոցեսների էֆեկտիվությունը [4, 5]:

Հետազոտության մերողիկան: Աշխատանքում օգտագործվել են միաբջիջ կանաչ ջրիմուտ *Chlorella pyrenoidosa*-ն, որը աճեցվել է Տամիայի միջավայրում (pH 6,8) սենյակային ջերմաստիճանում ( $25^{\circ}\text{C}$ ), լուսավորու-

բյունը 500–800լրտր, ինչպես նաև *Spirulina platensis*-ը՝ աճեցված Չառուկի միջավայրում նույն պայմաններում:

Ֆլուորեսցենցիայի ինդրուկցիան գրանցել ենք [6]-ում նկարագրված ֆլուորիմետր-ֆուֆորոսկոպով: Փորձերի կենսաբանական կրկնողությունը հնգակի է:

**Արդյունքները և նրանց քննարկումը:** Մեր կողմից դիտարկվել է կապարի տարբեր քանակության ազդեցությունը կանաչ և կապտականաչ ջրիմուների ֆոտոսինթետիկ ապարատի քլորոֆիլի ֆլուորեսցենցիայի ինդրուկցիայի վրա: Որոշակի քանակությամբ ջրիմուների սուսպենզիային ավելացվել է  $5\text{--}125 \mu\text{l/l}$   $\text{PbCH}_3(\text{COO})_2$ -ի 0,1  $\text{U}$  լուծույթ, այնուհետև 30 րոպե էքսպոզիցիայով նըստեցվել է ծծամաքղրի վրա և չափվել քլորոֆիլի ֆլուորեսցենցիայի ինդրուկցիան: Վերջինս արտահայտվում է բարդ կինետիկ կորի տեսքով, օժտված մաքսիմումներով և մինիմումներով, որոնց անցումները հայտնի են Կառուցկու էֆեկտ անվանմամբ: Այդ կորը կազմված է  $O-I-D-P-S-M-T$  փուլերից, ընդունում  $O-I-D-P$ -ն արագ փուլն է, իսկ  $P-S-M-T$ -ն՝ դանդաղը [7, 8]: Մեր կողմից հետազոտվել են  $P-S-M-T$  անցումները (նկ. 1):



Նկ. 1: Սպիրոլինա (a) և քլորելա (b) միկրոքրիմուների ֆլուորեսցենցիայի ինդրուկցիոն կորերը:

Առաջ է երկրորդ մաքսիմումը՝  $M$ , որին հաջորդում է ֆլուորեսցենցիայի ինտենսիվության անկում մինչև  $T$  մակարդակ:  $P-S$  անցման 2 եղանակ կա: առաջինը՝ ֆոտոքիմիական, որը կապված է ՖՀ2-ի քիմոնի օքսիդացման հետ և երկրորդը՝ ոչ ֆոտոքիմիական մարտմ, որը կապված է ՖՀ2-ից ՖՀ1 (ֆոտոհամակարգ 1) գրգռման էներգիայի վերաբաշխման հետ [8]: Այդ երևույթը ստացել է սպիրոլին անվանումը: Այն բարձրակարգ բույսերի դեսպում բացատրվում է լույս հավաքող կոմպլեքսի ապիտակուցների ֆուֆորիլացմամբ, որը հանգեցնում է պիզմենտ-սպիտակուցային համակարգի կոնֆորմացիոն փոփոխության, արդյունքում գրգռման էներգիան փոխանցվում է ՖՀ2-ից ՖՀ1-ին [4, 8]:


Եղանակությամբ ջրիմուների սուսպենզիային ավելացվել է  $5\text{--}125 \mu\text{l/l}$   $\text{PbCH}_3(\text{COO})_2$ -ի 0,1  $\text{U}$  լուծույթ, այնուհետև 30 րոպե էքսպոզիցիայով նըստեցվել է ծծամաքղրի վրա և չափվել քլորոֆիլի ֆլուորեսցենցիայի ինդրուկցիան: Վերջինս արտահայտվում է բարդ կինետիկ կորի տեսքով, օժտված մաքսիմումներով և մինիմումներով, որոնց անցումները հայտնի են Կառուցկու էֆեկտ անվանմամբ: Այդ կորը կազմված է  $O-I-D-P-S-M-T$  փուլերից, ընդունում  $O-I-D-P$ -ն արագ փուլն է, իսկ  $P-S-M-T$ -ն՝ դանդաղը [7, 8]: Մեր կողմից հետազոտվել են  $P-S-M-T$  անցումները (նկ. 1): Ինչպես հայտնի է,  $P$  կետում ՖՀ2-ի առաջնային ակցենտորը քիմոնի առավելացույն վերականգնված է: Սկզբում տեղի է ունենում  $P-S$  մարտմը, այնուհետև առաջա-

Ինչպես երևում է նկ. 1-ից, թեև քլորելայի և սպիրուլինայի ինդուկցիոն կորերը բավականին տարբեր են, սակայն  $P-S-M-T$  անցումները երկուսի դեպքում ել լավ արտահայտված են:

**Քլորելայի ֆլուորեսցենցիայի  $P, S, M, T$  պարամետրերի ինտենսիվությունները (հարաբ. միավորներ) կապված միջավայրում կապարի կոնցենտրացիայից**

| Pb, մ/լ | P     | S     | M     | T    |
|---------|-------|-------|-------|------|
| ստուգիչ | 9,94  | 9,02  | 9,04  | 6,04 |
| 5,0     | 11,06 | 10,32 | 10,32 | 6,54 |
| 12,5    | 11,7  | 11,2  | 11,22 | 7,2  |
| 25,0    | 10,5  | 9,7   | 9,34  | 6,4  |
| 125,0   | 7,2   | 6,4   | 6,6   | 5,2  |

Փորձերի արդյունքները ցույց են տալիս, որ կապարի  $0,1\text{U}$  լուծույթի ցածր կոնցենտրացիայի ( $5-25\text{մ/լ}$ ) դեպքում դիտվում է ինդուկցիոն կորերի բոլոր մաքսիմումների և մինիմումների աճ ստուգիչի հետ համեմատած, որը կապված է ջրհնուուների պաշտպանական հարմարվողական պրոցեսների ակտիվացման հետ [9]: Ենթադրվում է, որ  $P$  մաքսիմումի աճը քլորելայի դեպքում  $11,5\%-ով$  (տես աղյուսակը) կապված է ՖՀ2-ի ռեակցիոն կենտրոնների առավելագույն փակման հետ: Ինչ վերաբերում է ֆլուորեսցենցիայի դանդաղ  $S-M-T$  փոփոխությանը, ապա՝ համաձայն ժամանակակից պատկերացումների, այն կապում են ԱԵՖ/ԱԴՖ, ՆԱԴՀ/ՆԱԴ<sup>+</sup> անցումների և ցիկլիկ/ոչ ցիկլիկ էլեկտրոնային տրանսպորտի հետ [8]: Կապարի կոնցենտրացիայի հետագա մեծացումը ( $25\text{մ/լ}$ ) առաջացնում է ֆլուորեսցենցիայի  $P$  և  $S$  կետերի անկում, որը պայմանավորված է ՖՀ2-ից ՖՀ1 էներգիայի փոխանցման մեծացումով:



Նկ. 2:  $F_p/F_t$  (1) և  $F_m/F_t$  (2) հարաբերությունների կախվածությունը միջավայրում կապարի կոնցենտրահամարից:

**Խախտում:** Արդյունքում տեղի է ունենում  $P$ -ի գրագության դեպքիվացիա ֆլուորեսցենցիայի ճանապարհով: Ընդ որում, նկատվում է ֆլուորեսցենցիայի քոյլ արտահայտված աճ  $M-T$  հատվածում:

Հայտնի է, որ ծանր մետաղները առաջացնում են քլորոֆիլի լույս հավաքող կոմպլեքսների դեղագործացիա, ֆոտոհամակարգերի ռեակցիոն կենտրոնների գրգռման էներգիայի փոխանցման խանգարում, ինչպես նաև կապվում են ՖՀ1-ի և ՖՀ2-ի քլորոֆիլ-սպիրակուցային լույս հավաքող կոմպլեքսների կողմից [10, 11]:

Սիզավայրում մեծ քանակությամբ կապարի ( $125\text{մ/լ}$ ) առկայության դեպքում նկատվում է ինդուկցիոն կորի բոլոր մաքսիմումների կտրուկ անկում:  $Pb$ -ի մեծ կոնցենտրացիան առաջացնում է ՖՀ2-ի պիզմենտ-սպիրակուցային համակարգի կառուցվածքային ամբողջականության խախտումը:

Որպես դանդաղ ֆլուորեսցենցիայի ինդուկցիայի պարամետրեր ստացել ենք  $F_M/F_T$  հարաբերությունը (նկ. 2), որը ցույց է տալիս ֆոտոսինթեզի էֆեկտիվությունը, ինչպես նաև  $F_P/F_T$  հարաբերությունը, որը ցույց է տալիս քլորոֆիլի ֆլուորեսցենցիայի մարումը ամբողջ  $P-S-M-T$  տիրություն [3]: Այստեղ  $F_M$ -ը և  $F_P$ -ն ֆլուորեսցենցիայի այն մակարդակներն են, որոնք համապատասխանում են ինդուկցիայի  $M$  և  $P$  մաքսիմումներին, իսկ  $F_T$ -ն ֆլուորեսցենցիայի ստացիոնար վիճակն է:

Կապարի կոնցենտրացիայի մինիմալ քանակությունը ( $5 \text{ мкг/л}$ ) հանգեցնում է  $F_P/F_T$  հարաբերության ածին, իսկ  $5-125 \text{ мкг/л}$ -ը՝ նվազմանը: Միենույն օրինաչափությունն է նկատվում նաև  $F_M/F_T$  հարաբերության համար, որի ամր պայմանավորված է լուսավորման առաջին վայրկյաններին ԱԵՖ-ի սինթեզի ակտիվացմամբ  $\Delta\text{RH}-ի$  փորձացման հաշվին [3]:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ ոչ ֆոտոքիմիական մարման գործակիցը ( $qN=(P-P')/P$  [12]) քլորելայի դեպքում աճում է 28%-ով ( $Pb=125 \text{ мкг/л}$ -ի դեպքում), ինչը պայմանավորված է նրա ֆոտոսինթետիկ ապարատի վրա ծանր մետաղների ազդեցությամբ:

Ինչ վերաբերում է սպիրուլինային, ապա մեր կողմից պարզվել է, որ ուսումնասիրված կոնցենտրացիայի տիրություն վերջինս շատ ավելի կայուն է կապարի ազդեցության նկատմամբ և նրա ֆոտոսինթետիկ ակտիվությունը նկատելի փոփոխության չի ենթարկվում՝  $qN$  գործակիցը գրեթե չի փոխվում:

Վերը բերված և գրականությունից հայտնի տվյալները բոլով են տալիս եզրակացնել կապարի ազդեցության ժամանակ ֆոտոսինթետիկ ապարատի ոչ հատկանշական և ոչ միարժեք պատասխան ռեակցիայի մասին. Փոքր կոնցենտրացիաների դեպքում դրսևորվում է ֆոտոսինթետիկ ակտիվության աճ, մեծ կոնցենտրացիաների դեպքում՝ ֆոտոսինթետիկ ապարատի ինակտիվացիա:

Կենսաֆիզիկայի ամրում

Ստացվել է 18.06.2004

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зайцева И.И. – Ботанический журнал, 1999, т. 84, № 8, с. 33–41.
2. Полынов В.А., Маторин Д.Н., Вавилин Д.В. – Физиол. раст., 1993, т. 40, № 5, с. 754–759.
3. Караваев В.А., Баулин А.М. – Физиол. раст., 2001, т. 48, № 1, с. 47–54.
4. Рубин А.В., Федоренко Ю.П. – Физиол. раст., 1991, т. 38, № 2, с. 228–234.
5. Samson G., Popovic R. – Ecotoxicol Environ. Saf., 1988, v. 16, № 3, p. 272–278.
6. Джавршян Дж.М. – Первичные процессы фотосинтеза растений при загрязнении атмосферы и перспективы биофизического мониторинга: Автореф. дис. на соискание уч. ст. док. биол. наук. Минск, 1991.
7. Гаевский Н.А., Моргун В.Н. – Физиол. раст., 1993, т. 40, № 1, с. 136–145.
8. Веселовский В.А. Люминесценция растений. М.: Наука, 1990, 200с.
9. Таланова В.В., Титов А.Ф. – Физиология и биохимия культурных растений, 2001, т. 33, № 1, с. 33–37.
10. Бекасова О.Д., Бреховский А.А. – Биофизика клетки, 2002, т. 47, № 3, с. 515–523.
11. Amblard-Gross G., Ferard J.F. – Environ. Pollut., 2002, v. 120, № 1, p. 47–58.
12. Рубин А.Б. – Биофизика. Т. 2. М.: Книжный дом «Университет», 2000, 468с.

ИССЛЕДОВАНИЕ ЭЛЕКТРОН-ТРАНСПОРТНОЙ ЦЕПИ  
МИКРОВОДОРОСЛЕЙ ХЛОРЕЛЛЫ И СПИРУЛИНЫ ПРИ НАЛИЧИИ  
В СРЕДЕ СВИНЦА

Резюме

Исследовали влияние разных концентраций свинца на индукцию флуоресценции хлорофилла *a* хлореллы и спирулины. Начиная с концентрации 12,5мл/л, наблюдалось падение параметров индукционной кривой. Изменение этих параметров свидетельствует о снижении активности ФС2. Также показано, что спируллина более устойчива к наличию свинца в среде, чем хлорелла.

J. M. JAVRSHYAN, H. H. TADEVOSYAN

STUDY OF ELEKTRON TRANSPORT CHAIN OF MICROALGAE  
CHLORELLA AND SPIRULINA IN PRESENCE OF LEAD IN THE  
ENVIRONMENT

Summary

Effects of different lead concentrations on induction of chlorophyll *a* fluorescence were studied in *Chlorella* and *Spirulina*. Beginning with concentration of 12,5ml/l falling of parameters of induction curve was observed. The change of these parameters indicates decrease of activity of PS II. It is also shown, that *Spirulina* is steadier in presence of lead in the environment, than *Chlorella*.